California High-Speed Rail Authority

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՓՈՒԼ - Ղեկավարությունը այժմ անցկացնում է նախնական միջավայրային վերանայում, որը հայտնի է որպես Համընդհանուր Վերանայման Փուլ, LA-ի կենտրոնի Union Station-ից Փալմդեյլ մեկնող ճեպընթացի կառուցման հարցի վերաբերյալ:

Ղեկավարությունը կիրավիրի Համընդհանուր Վերանայման Ժողով ճեպընթաց երկաթուղու միջանցքում որպեսզի հասարակությանը հնարավորություն ընձեռնվի հարցեր տալու և կարծիքներ արտահայտելու տվյալ նախագծի վերաբերյալ: Համընդհանուր Վերանայման Ժողովները կկազմակերպվեն հետևյալ ամսաթվերին և հետևյալ վայրերում .

- Չորեքշաբթի, Ապրիլ 4, 2007 6-8 p.m.: Glendale Public Library; 222 E. Harvard St, Glendale, CA 91205
- Հինգշաբթի, Ապրիլ 5, 2007 6-8 p.m.: LA County MTA Board Room; One Gateway Plaza, Los Angeles, CA 90012
- Երեքշաբթի, Ապրիլ 10, 2007 6-8 p.m.: Sylmar Park Recreation Center; 13109 Borden Ave, Sylmar, CA 91342
- Հինգշաբթի, Ապրիլ 12, 2007 6-8 p.m.: Palmdale City Hall; 38300 Sierra Hwy, Palmdale, CA 93550
- Երեքշաբթի, Ապրիլ 17, 2007 6-8 p.m.: LA River Center & Gardens; 570 W. Ave 26, Los Angeles, CA 90065

Մենք քաջալերում ենք Ձեր ներդրումը այս պեճընթաց երկաթուղու կառուցման կապակցությամբ և սպասում ենք Ձեր արձագանքին: Ձեր կարծիքը կարևոր դեր է խաղում:

Առաջարկված Լոս Անջելես Պալմդեյլ ուղին կհաջորդի գոյություն ունեցող մետրո-երկաթուղուն San Fernando Road-ից անցնելով Լոս Անջելեսով, Գլենդեյլով, Բրբանկով և Սան Ֆերնանդոյով, մինչև շարունակելը Soledad Canyon Road-ով անցնելով Santa Clarita Mountains-ով դեպի Պալմդեյլ:

ՕԳՈՒՏՆԵՐԸ, որոնք առկա կլինեն շրջանում ճեպընթաց երկաթուղին շահագործելու դեպքում հետևյալն են:

- Վերացնել այն ուշացումները և անվտանգության մտահոգությունները գոյություն ունեցող երկաթուղային խաչմերուկներում, որտեղ ճեպընթաց երկաթուղին կապահովի խաչմերուկային տարանջատում:
- Ավելի անվտանգ, վստահելի փոխադրման միջոց ի համեմատ մայրուղու և օդային ուղիների:
- Կօգտագործի փոխադրման նոր միջոց, որը կբարելավի կապը և գոյություն ունեցող տրանզիտային սիստեմների և օդանավակայանների մատչելիությունը:
- Կբարելավի աշխատանք ձեռք բերելու հնարավորությունը ապահովելով մոտավորապես 450,000 աշխատատեղերով:
- Կառաջարկի ավելի ցածր արժեքներ ի համեմատ մեքենաների կամ օդային ուղիների կողմից առաջարկվող միջքաղաքային շուկաների:
- Կնվազեցնի մայրուղիներում և օդային ուղիներում տիրող գերծանրաբեռնվածությունը: